ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3.2-2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի **3.2** կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի **3.2** կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 2 (երկու) հայտ՝

- «Զ Էս Տոպ» ՍՊԸ-ի
- «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի **3.2** կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) հայտերից՝

- 1 (մեկի)՝ «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.3 կետի 1-ին ենթակետի և 2.4.1 կետի պահանջներին: Մասնավորապես՝ հայտատու կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 3 տարվա ցուցահանդեսների իրականացման փորձ, ինչպես նաև հայտում ներկայացված ֆինանսական առաջարկը չի ապահովում կազմակերպության կողմից ներկայացված ծրագրի իրականացումը:
- 1 (մեկի)՝ «Զ Էս Տոպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են մրցույթի համար սահմանված չափորոշիչներին, սակայն ֆինանսական նախահաշիվը ունի խմբագրման կարիք: Մասնավորապես առաջարկվում է՝ նախահաշվով ներկայացված 41.639.000 (քառասունմեկ միլիոն վեց հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ գումարը վերախմբագրել և ներկայացնել 37.000.000 (երեսունյոթ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով նախահաշիվ: Մասնավորապես՝ Ծրագրի ֆինանսական նախահաշվով ներկայացված աշխատավարձի (Աշխատավարձ բաժին) հաշվարկը ներկայացնել երեք ամսվա կտրվածքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքները սկսվելու են պայմանագրի կնքման պահից, իսկ այլ ծախսերը (Այլ ծախսեր) 4.200.000 ՀՀ դրամը վերանայել:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի **3.2** կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված հրավերի պահանջներին չհամապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը:

2. Հաղթող ճանաչել Ծրագրի հավելված 2-ի **3.2** կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ «Զ Էս Տոպ» ՍՊԸ-ն:

3. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի **3.2** կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման համար հաղթող ճանաչվող «Զ Էս Տոպ» ՍՊԸ-ի հետ՝ նախահաշվային փաստաթղթերի վերախմբագրված տարբերակը ներկայացնելու դեպքում:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____